**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ**

***«Հայկական առողջապահական ազգային խորհուրդ»***
***քաղաքացիական հասարակական***
***կազմակերպություն կոալիցիայի***
*փաստաբան Պավլիկ Փոլադյան*
*Արտոնագիր N 2528*
*Ծանուցման հասցե՝ 1. ՀՀ, ք. Երևան, Փափազյան 13ա,*
*2. Էլ. հասցե՝ pavlik.poladyan@mail.ru*
*Հեռ. 099 69-67-60*

**17.10.2019թ.**

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

08.10.2019թ.-ին Լոռու մարզպետարանում տեղի է ունեցել «Ալավերդի» բժշկական կենտրոնի տնօրենի ընտրության մրցույթը: Մրցույթին մասնակցելու հայտ էին ներկայացրել գործող տնօրեն՝ Ստեփան Մոսինյանը, Ստեփանավանի բժշկական կենտրոնի վիրաբույժ վարիչ և Վանաձորի բժշկական կենտրոնի վիրաբույժ Գևորգ Ազարյանը, Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկայի քիթ, կոկորդ, ականջաբան՝ Անուշ Իսպիրյանը և «Ալավերդի» բժշկական կենտրոնի ՓԲԸ-ի փոխտնօրեն Հովիկ Ավետիսյանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով, խնդրում եմ տեղեկատվություն տրամադրել հետևյալի մասին.

- 08.10.2019թ.-ին «Ալավերդի» բժշկական կենտրոնի տնօրենի ընտրության մրցույթի անցկացման կարգը,
- Ովքեր են եղել մրցութային հանձնաժողովի կազմում և ինչ պաշտոններ են զբաղեցրել,
- Գևորգ Ազարյանը հաղթե՞լ է մրցույթում, թե ոչ, եթե չի հաղթել ապա ինչո՞ւ:

Կից ներկայացնում եմ՝

- փաստաբանի արտոնագրի պատճենը:

***Հարգանքով՝***
*«Հայկական առողջապահական ազգային խորհուրդ»*
*քաղաքացիական հասարակական*
*կազմակերպություն կոալիցիայի*
*փաստաբան Պավլիկ Փոլադյան*